

# ԲԱՔՈՒՒ ՀԱՄԱՐ ՀՐԱԴԱԴԱՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԶԻ ՎԵՐԱԲԵՐԻՐ

ԲԱՅՑ...

կուսին պատճառով վաճառվելի ներդրվեալն մասնաւորապէս է:

ՇՎԱՐՆԱՅԻ դատաւարտեց (Սեպ. 1) սուսական հրթիռներու յարձակում մը Սոխումի վրացական պահակազօրքին վերայ եւ ինդրոյ առարկայ դարձուց այն բանակցութիւնները, որոնք պէտք է սկսէին Սեպ. 3-ին, Մոսկուա, վրացիներու եւ Արխանգելսկի միջեւ ուստի միջնորդներու ներկայութեան: Թիֆլիսէն հասած տեղեկութիւններու համաձայն, վրացական պահակազօրքը յարձակման ենթարկուած է վաղ առաւօտէն Ռուսաստանի Պաշտպանութեան նախարարութեան կախում ունեցող զինուորական տարրաւորմանէ մը եւ Շվարնաձէ անմիջապէս հեռաձայնած է Բորիս Ելցինի եւ այս վերջինը ապահովութիւն տուած է որ նման ոչ մէկ հրահանգ տրուած է: Շվարնաձէ պնդած է որ նման հրահանգ մը տրուած է: «Ոչ մէկ պատճառ ունիմ չհաւատարու ժողովուրդիս» շեշտած է, աւելցնելով թէ եթէ լուրը հաստատուի Սեպ. 3-ի հանդիպումը տեղի չի կրնար ունենալ: Միւս կողմէ, բախումները կը շարունակուին արխաղ ազգայնականներու եւ վրացական ուժերու միջեւ: Օգոստոսի կէսէն ի վեր մեռեալներու թիւը 150-ի հասած է:

ՓԱԹՐԻԲ ՏԷՎԷՃԵԱՆ, Երեսօրիսան -- քաղաքապետ Անթոնիի, թղթածրար մը կազմած է Մասսիթրիխթի հակառակորդներուն անհեթեթութիւններով, խորագրուած «Le bétisier de Maastricht»: Տէվէճեան որ բուն պաշտպան մըն է դաշնագրին, ճառերուն, յօդուածներուն, հոս ու հոն եղած արտայայտութիւններուն մէջէն ժողոված է հակասութիւնները, սխալները, հակաճշմարտութիւնները եւ սեւ ճերմակի վրայ ծիծաղելի դարձուցած հեղինակները: Առաջին կարգի վրայ են Ֆիլիփ Սէկէն եւ Մարի - Ֆրանս Կառօ, որոնք կը դատաւարտեն դաշնագրին ընկերային քաղաքականութիւնը, մինչ ընկերային հարցերը բոլորովին դուրս կը մնան Հասարակապետութեան դաշտէն (յօդուած 2, 6-րդ պարբերութիւն ընկերային քաղաքականութիւն): Նման «ճշդումներու» կ'ենթարկուին Միշէլ Փոնիաթովսկի, Ֆիլիփ տը Վիլիէ, Շառլ Փապուա, Միշէլ Տըպրէ, մէկ սխալ միայն կայ «Իւմանիթէ»-ին համար: Բացակայ են Լը Փէն եւ Շըվիլըման:

ՏԱՃԻԿՍՏԱՆԻ նախագահին հետքը կորսուած էր Սեպ. 2-ին: Ինչպէս ծանօթ է 2-էն 300 ընդդիմադիրներ դրուած էին Դուշամբէի նախագահական պալատը պահանջելով նախագահ Նարիեւի հրաժարումը: Տեղւոյն վրայ պատանդ բռնած են կառավարութեան կարգ մը անդամները եւ քաղաքապետը: Կ'ըսուի թէ նախագահը ապաստան գտած է ՀԱՊ-ի ուժերու զօրանոցը, որ մայրաքաղաքին կեդրոնը կը գտնուի:

«ՓՐԱԿՍՅԻ ԳԱՐՆԱՆ» նախկին պարագլուխը՝ Ա. Տուպչէք կառքի արկած մը ունեցած է եւ ծանրօրէն վիրաւորուած: 70 տարեկան, սոսիալ - դեմոկրատ կուսակցութեան ներկայ ղեկավարը բազմաթիւ վէրքեր ունի, մանուաւոր կուրծքի վանդակէն եւ խորապէս ցնցուած է: Ողնայարի ծանր դործողութեան մը ենթարկուած է որ երեք ժամ տեւած է:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ներքին նախարարը Բաքուի մէջ թրքական «Հիւրիյէթ» օրաթերթին յայտարարած է թէ Ղարաբաղը իրենց ներքին մէկ հարցն է ու Հայերու հետ այդ մասին բանակցել սխալ կ'ըլլայ: Նախարար Թ. Ղասըմով ըսած է. «Հայաստանի զինեալ ուժերը կը պատրաստուին Ղարաբաղի մէջ. սակայն եթէ հարկաւոր է որ մէկը լուծէ Ղարաբաղի Հայերու հարցերը, ատիկա մենք կրնանք ըլլալ»:

ԹՐՔԱԿԱՆ ԶՕՐԱԲԱԺԻՆՆԵՐ Օգոստոսի (Շաբ. ք. Դ. Է9)

Ազրբեջանի ծաւալած դործողութիւնները Հայաստանի սահմանամերձ շրջանները ապացոյցը կու տան որ Ազրբեջանի ղեկավարները, ներառեալ նախագահը, չեն յարգեր իրենց կակ խօսքը, երբ կ'ըսեն թէ հրադադարը չի վերաբերիր Ղարաբաղին, այլ միայն՝ սահմանամերձ շրջաններուն, այսինքն՝ Հայաստանի եւ Ազրբեջանի: Արդարեւ, Սեպ. 1-էն իսկ հրետանի եւ գրառ կայաններէն կրասնոսելակի եւ Կասրանի ուժերով ղեկավարող շին զադրած, ինչպէս արդէն գրած էինք երէկ ալ: Հինգ վրրաւոր կար եւ բաւական մեծ աւեր:

Նոյն առաւօտը ժամը 8-էն սկսեալ եւ այս անգամ Նախիջևանէն Ազրբեջանի հետեւակը մտած է Եղեգնաձորի շրջանի Խաչիկ զիւղը, 100 մեթր յառաջանալով հայկական հողերէն ներս: Կարճ բախումէ մը ետք, հայկական կողմը յաջողած է ետ մղել Ազրբեջանը: Զանգեզուրէն ալ, Արմէնիքի թղթակիցը հաղորդած է թէ ռումբեր ինկած են Գորիսի եւ Կոռնիձորի վրայ, ուր կրակ առած են երեք տուններ: Այս ամբողջը կը փաստէ որ հրադադարը ընդհանուր առմամբ Ազրբեջանի չի վերաբերիր:

Ղարաբաղի Գերագոյն Խորհուրդի նախագահի պաշտօնակատարը՝ Գէորգի Պետրոսեան անդրադառնալով Ղարաբաղի ուժերակոծութեանց հրադադարի ժամէն ետք, ըսած է ԻԹԱՐ-ԹԱՍ-ի թղթակցին թէ Ազրբեջանի ապտակն է Ղաղախստանի եւ Եւրոպայի Ապահովութեան Գործակցութեան ժողովին խաղաղասէր բոլոր նախաձեռնութեանց:

Ազրբեջանական բանակի ստորաբաժանումները հրետանիով եւ գրառով կատարել կերպով ուժերակոծած են Հագրութի շրջանի Թանք, Թաղասէր, Վանք, Բուրեկ, Կեմրակուճ զիւղերը, ուր երկու մեռեալ եւ երեք վիրաւոր կայ:

ԹԱՍ հաղորդած է արդէն որ անկախ դէտեր հաստատած են, Ղարաբաղի մէջ, որ Ազրբեջան խախտած է հրադադարը:

\*\*\*

Սեպտեմբեր 1-ին, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան հրահանգելով մը ստորագրած է, որ Երեւանի պետական Համալսարանին կու տայ ինքնավար պետական բարձրագոյն ուսումնական, գիտական եւ մշակութային հաստատութեան կարգավիճակ:

\*\*\*

Սեպտեմբեր 1-ին Ճաքարթայի (Ինստիտուտ) մէջ բացուած է զինակցութեան մը մաս չկազմող երկիրներու (ԱՄՆ, Արժ) 10-րդ վեհաժողովը, որու որպէս դէտ, Հայաստանի կողմէ կը մասնակցի Արտաքին նախարար՝ Բաֆֆի Յովհաննէսեան, որ առիթ ունեցած է նաեւ զանազան հանդիպումներ ունենալու ու արձարժելու Հայաստանը շահաւորող հարցեր:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՐԱՆ քնական կողմէ ալ տեսակի հեղուկ վառելանիւթեր պիտի հայթայթէ Նախիջևանի, ըստ ԻՐՆԱ. դործակալութեան լուրին: Նախիջևան որ սեղմուած է Իրանի, Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ, Հայաստանի կիրարկած շրջափա-